

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆՑԱՆՇՈՒՄՆԵՐ

Վերջին երկու տարիների հայ տնտեսագիտությունը իրական և տեսական հատվածների վերաբերյալ ուսումնասիրությունների թեմատիկ բազմազանության մեջ որոշակի նյութ է տալիս ծավալուն վերլուծության համար: Սույն հոդվածում լուսանցանշումներ են այդ ուղղությամբ:

– 1 –

Տարադրամի փոխարժեքը և միջազգային ֆինանսներն անգետներին ներկայանում են որպես առեղծվածային ոլորտ: Բայց հաճախ այն այդպիսին է մաս մասնագետների համար: Ասում են՝ մեծն Ջոն Մեյնարդ Զեյնսին, որն զբաղվում էր արտասահմանյան տարադրամի առք ու վաճառքով, երեք անգամ ուղեկցել է հաջողությունը, իսկ երկու անգամ էլ բաժին է ընկել անհաջողությունը:

Սովորաբար ազգային պետությունները ձգտում են ունենալ սեփական տարադրամ՝ ակնկալիքով իրականացնելու հայրենական տնտեսության ճկուն կառավարում, ապահովելու երկրի լրիվ անկախությունն այլ պատմություններից, որոնք իրականացնում են դրամական քաղաքականություն իրենց շահերի համար և ազգային տնտեսությունը պաշտպանում ինֆլյացիայից: Սա գուցե տեսականորեն ճիշտ է, եթե երկիրը մեկուսացված է արտաքին աշխարհից և վարում է ինքնաբավ տնտեսություն: Սակայն, աշխարհատնտեսական արդի կապերի պայմաններում տարադրամի փոխարժեքը դարձել է այն վճռական գինը, որը երկրի տնտեսությունը կապում է մնացած աշխարհի հետ, երբ «անվանական և իրական փոխարժեքների վարքագծերը» դարձել են մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացի «հիմնարար փոփոխականներ»: Այս առումով գիտական ուրույն հետաքրքրություն է ներկայացնում Տիգրան Սարգսյանի «Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ» աշխատությունը (Եր., «Ֆենոմեն» հրատարակչություն, 2008, 127 էջ), որը հետամուտ է փոխարժեքի դերի առանձնահատկությունների ու դրամավարկային քաղաքականության հետ փոխկախվածության քննությանը: Այն առավել կարևորություն է ստանում «փոքր բաց տնտեսություն» ունեցող Հայաստանի համար, որում կատարվող կառուցվածքային տեղաշարժերն իրենց անմիջական արտացոլումն են գտնում փոխարժեքի վարքագծում: Ընդհանրապես, հարցերի բացատրության ժամանակ տնտեսության տիրույթը մի առանձնակի ուղադրություն է շարժում՝ հայտնվելով առաջին հորիզոնականում: Ուստի և ոչ պատահականորեն աշխատության մեջ փոխարժեքի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի, վերլուծությունը սկսվում է գնողականության համարժեքության տեսության (մեկ գնի օրենքի) մեկնությամբ: Գաղափարի ի հայտ գալը հեղինակը հատկացնում է XVI, XVII դարերին, ի դեմս Իսպանիայի Սալամանկայի դպրոցի ներկայացուցիչների և անգլիացի մտածող Ժերար դե Մալինսի: Իսկ արդեն XX դարի քսանական թվականներին շվեդ տնտեսագետ Գուստավ Կասսելի մոտ այն սահմանվեց որպես տեսություն՝ հետագայում ընդլայնելով ու կատարելագործելով նրա կիրառական տարրերի սահմանները: Դիպուկ է Տ.Սարգսյանի այն նկատումը, թե «գնողականության համարժեքայնության կիրառությունը գործնականում ցույց է տալիս, որ այն վատ է բացատրում իրականությունը»: Այսինքն, այն արստրակցիա է և գործում է որպես ընդհանուր սկզբունք, որն իրական հատվածում ենթակա է շեղումների տրամաբանու-

թյանն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածներում: Հեղինակի վերլուծական անցումները հանրագումարային իմաստ են ստանում հետևյալ ընդհանրացումներում.

1. Միևնույն արժույթի բերված արտահանելի ապրանքների գները պետք է հավասարվեն, որն անվանում ենք մեկ գնի օրենք:
2. Ոչ արտահանելի հատվածում գների հավասարությունը չի գործում, քանի որ այդ ապրանքները, տրանսպորտային մեծ ծախսերի պատճառով, չեն կարող տեղափոխվել մի երկրից մյուսը: Դրանց գինը որոշվում է միայն ներքին պահանջարկի և առաջարկի հիման վրա:
3. Ոչ արտահանելի ապրանքների գների տարբերության պատճառը հիմնականում երկրների միջև մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների տարբերությունն է, որն առաջանում է արտահանելի հատվածում տարբեր արտադրողականության հետևանքով:
4. Գործնականում հաճախ դիտարկվում են նաև մեկ գնի օրենքից շեղման բազմաթիվ դեպքեր, որոնք պայմանավորված են տրանսպորտային ծախսերով, առևտրային սահմանափակումներով, կատարյալ մրցակցության բացակայության և գների կոշտություններով¹: Աշխատության սույն հատվածը թերի կլիներ առանց իրական փոխարժեքի ներքին ու արտաքին մրցունակության, ներքին ու արտաքին իրական փոխարժեքների միջև կապի, մրցունակության վրա իրական փոխարժեքի արժևորման ունեցած ազդեցության հարցերի բացատրության: Դրան հաջորդում է իրական փոխարժեքի՝ ներքին ու արտաքին հավասարակշռվածությունն ապահովող ցուցանիշի վերլուծությունը կարծես շրջանառվող հասկացությունների մեջ նախապատրաստելով անցումը փոխարժեքի և դրամավարկային քաղաքականության հիմնահարցի քննությանը:

Կատեգորիաները և հասկացություններն իրենց ֆունկցիաները ստույգ են արտահայտում այն ժամանակ, եթե ճիշտ կետում են դիտվում դրանց ունեցած նշանակությունները: Իրավացի է Տ.Սարգսյանի այն նկատումը, թե բաց տնտեսություններում փոխարժեքի դերը երկակի է՝ մի կողմից իր ազդեցությունն ունենալով մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա, իսկ մյուս կողմից՝ որպես գնային գործոն, փոփոխվելով մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացում. «Միաժամանակ, փոխարժեքը, որպես երկրի ներքին արժույթի արտաքին գին, փոփոխվում է ինչպես ներքին ու արտաքին արժույթների քանակական, այնպես էլ դրանց ներքին գնային՝ տոկոսադրույքների փոփոխություններից՝ հայտնվելով դրամավարկային քաղաքականության ուղղակի ազդեցության ներքո», այսինքն՝ «փոխարժեքի վարքագիծն առավելապես պայմանավորված է դրամավարկային քաղաքականության նպատակների սահմանմամբ»: Ընտրությունը միշտ եղել է տնտեսական պահվածքի ուղեկիցը: Նույնը նաև մակրոտնտեսական կարգավորման ժամանակ՝ արժույթային և դրամավարկային քաղաքականության ընտրությունը:

Իրական փոխարժեքի ճշգրտման միջոցով տնտեսության մեջ ձևավորվում է ներքին ու արտաքին հավասարակշռվածությունը: Իսկ երբ կապիտալի և տրանսֆերտների ներհոսքի արդյունքում մեծանում է արտարժույթի առաջարկի աճը և խթանում ներքին պահանջարկը, ապա ձևավորվում են փոխարժեքի արժևորման և բարձր գնային միտումներ: Այստեղ է, որ կենտրոնական բանկը խնդրի գործնական իրացումներում բախվում է որոշակի դժվարության՝ «...երբ չի կարող միաժամանակ իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կապահովի ցածր գնաճ և չարժևորված կամ քիչ արժևորված փոխարժեք» (էջ 76): Իսկ

¹ Տիգրան Սարգսյան, Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, Եր., 2008, էջ 25-26:

երկընտրանքից խուսափելու հնարավորությունը տալիս է Ռոբերտ Մանդելի «անհնարին երրորդությունը»:

Վերը նշված հարցերն իրենց կոնկրետ իրացումները ստացել են հանրապետության վերջին երկու տասնամյակների տնտեսական պատմության հատվածում: Դա եղել է դժվարությունների, որոնումների ժամանակահատված, երբ հատկապես կայունացման առաջին տարիներին կենտրոնական բանկը չէր տնօրինում «դրամավարկային քաղաքականության անհրաժեշտ ամբողջ գործիքակազմին»:

Տ.Սարգսյանի աշխատությունը հնարավորություն է տալիս ճիշտ կարդալու այդ պատմությունը: Հարկ է նկատել աշխատության այն առանձնահատկությունը, որ նրանում երևույթների գնահատումը կատարվում է այն չափանիշներով, թե հարցերն իրենց դրվածքում ու լուծումներում ինչ նստվածքներ են հայտաբերում տարբեր երկրների արդի տնտեսական զարգացման փորձի մեջ, և թե հիմնավորումների մեջ տնտեսագիտական մտքի նորագույն հետազոտությունների ինչ նոր փաստարկներ են բերվում: Տ.Սարգսյանի «Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ» աշխատությունը գրված է պրոֆեսիոնալ գրչով, դուրս է գուտ ուսումնական ձեռնարկ լինելուց և երաշխիք է նրա վերահրատարակության համար, ավելի լայն հարցադրումների ու ընդգրկումների ակնկալիքով:

– 2 –

Կարելի է վկայակոչել բազմաթիվ պատմական փաստեր այն մասին, թե հարկային համակարգն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ հասարակության սոցիալ-տնտեսական գործընթացների վրա՝ պատճառ դառնալով քաղաքական, տնտեսական ու սոցիալական խոր ցնցումների, վերելքների և վայրէջքների: Ինչպես նկատել է Պ.Պրուդոնը. «...հարկի հարցն ըստ էության ոչ այլ ինչ է, քան պետության հարցը»: Իսկ ռուս հասարակագիտական մտքի հայտնի ներկայացուցիչ Ն.Տուրգենևի կարծիքով. «Հարկերն ավելի որոշակի ասած, հարկային վատ համակարգերը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, եղել են այն պատճառներից մեկը, որ նիդեռլանդցիներն անկախացել են Իսպանիայից, շվեյցարացիները՝ Ավստրիայից, ֆրիսլանդցիները՝ Դանիայից և վերջապես կոզակները՝ Լեհաստանից: Արտասահմանյան առևտրի նկատմամբ ֆինանսական կառավարման վատ համակարգը վճռական նշանակություն է ունեցել Անգլիայի դեմ հյուսիսամերիկյան գաղութների խռովության վրա: Վիճարկման ենթակա չէ նաև այն, որ Լյուքսեմբուրգի ռեֆորմացիային առիթ է տվել ժողովրդից ոչ հմուտ փող հավաքելը:

Իհարկե, ֆինանսների խանգարումը չէ, որ առաջացրել է ֆրանսիական հեղափոխությունը, բայց շատ արագացրել է այն և առանձնահատուկ ազդեցություն ունեցել նրա ընթացքի վրա»¹:

Խորհրդային տարիներին, երբ ամեն ինչ «որոշ» էր, հարկերի և հարկագանձման թեման ոչ այնքան արժարժվող հարցերից էր: Հասարակական փոխակերպումների վերջին երկու տասնամյակների ընթացքում այն հայտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում, և թեման շարունակում է հետաքրքրել մասնագետներին: Եվ դա բնական է: Ու թեև իր ամբողջության մեջ ուրվագծվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, բայց նրա օրենսդրական դաշտում դեռևս առկա են անորոշություններ, հակասական կողմեր, հարկաբյուջետային իրավասությունների ու սոցիալ-տնտեսական պատասխանատվությունների կենտրոնի և տեղերի հստակեցման և այլ առումներով:

¹ Майбург Е.М. “Введение в историю экономической мысли”. М., 2000, с. 124.

Վլադիմիր, Դավիթ և Տիգրան Հարությունյանների «Հարկեր և հարկազանձում» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2010, 599 էջ) ծավալուն աշխատությունից կարելի է հետաքրքիր տեղեկություններ քաղել հարկերի և հարկազանձման սկզբունքների ու տեսաիրավական հիմքերի վերաբերյալ՝ սկսած Հին աշխարհից, ինչը գալիս է հաստատելու, որ ժամանակակից գրեթե բոլոր հարկատեսակներն այս կամ այն չափով ունեցել են իրենց նախնական դրսևորումները, և որ հարկերը տնտեսական հարաբերությունների հնագույն ձևերից են:

Ընդհանրապես, պետության մեջ հարկային հարաբերություններն արտահայտվում են հարկային քաղաքականության մեջ, որը կոչված է պետության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովումը ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման բարենպաստ պայմանների ստեղծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Սակայն «...հարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման այն տեսության ածանցյալն է, որը որդեգրում է տվյալ երկրի իշխանությունը»¹: 1990-ական թվականների ՀՀ-ի համար այդպիսին մոնետարիստական տեսությունն էր, որում շուկայական տնտեսությանն անցնող երկրների վերաբերյալ ցուցումներ չկային և վերածվեց տնտեսության արագ վերականգնման հույսերի էյֆորիայի²:

Աշխատության մեջ ՀՀ հարկային օրենսդրության պատմությունը բաժանվում է երկու փուլերի՝ 1992-1997թթ., որպես առաջին կամ ձևավորման փուլ և 1997թ.-ից հետո՝ որպես երկրորդ կամ բարեփոխումների փուլ: Ինչպես ամբողջ տնտեսական համակարգի, այնպես էլ նրա մի մասը կազմող հարկային համակարգի համար դա բեկման ժամանակաշրջան էր, երբ նորմատիվ օրենքներով կարգավորվածությունը, գործողության մեջ դրված հարկատեսակներն ու տուրքերը հաճախ իրական հատվածում ունենում էին այլ հետևանքներ՝ ազգային տնտեսության աճի լծակներից վերածվելով «պատժամիջոցների»: Նշված հարցերը ստացել են համապատասխան մեկնաբանություններ և ժամանակի հոսքի մեջ վեր հանվել հարկատեսակների և տուրքերի գործողության սահմաններն իրենց հակասական և կատարելագործում ակնկալող պարագծերում: Այսպես օրինակ, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության համատեքստում տալով հարկային եկամուտների գնահատականը՝ ընդհանրացվում են հարկման մակարդակի ցածր լինելու փաստը, անուղղակի հարկերի բարձր մասնաբաժինը, հարկման անարդարությունը³ և այլն: Կամ անդրադառնալով առանձին հարկատեսակների և դրանց փոխարինիչների գծով հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման խնդիրներին⁴, հեղինակներն առկա բացթողումների ու թերությունների վերացումը կարևորում են հարկման արդյունավետության մակարդակի բարձրացման և պետական բյուջեի եկամուտների աճի առումներով: Նշված հիմնախնդիրների լուծման համատեքստում, որպես հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվել են. ուժը կորցրած ճանաչել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ և 17-րդ, 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 7-րդ և 11-րդ կետերը, «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի հաստատագրված վճարների մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքները, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի «նվազագույն շահութահարկի» հաշվարկման և գանձման դրույթը,

¹ Վ.Հարությունյան, Դ.Հարությունյան, Տ.Հարությունյան, Հարկեր և հարկազանձում, Եր., 2010, էջ 148:

² Նույն տեղում, էջ 148-154:

³ Նույն տեղում, էջ 366-371:

⁴ Նույն տեղում, էջ 371-415:

վերանայել նույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը և այլն: Նույն դիտողականությամբ են շարադրված նաև աշխատության մյուս բաժինները:

Այս իմաստով հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում, հարկման արդյունավետության և պետական բյուջեի հարկային եկամուտների գնահատականը ՀՀ-ում, ՀՀ հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումները ՀՀ-ում, փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները ՀՀ-ում, ֆինանսատնտեսական արդի ճգնաժամի հետևանքները, դրա հատրհահարման և հակաճգնաժամային միջոցառումների բարելավման ուղիները ՀՀ-ում. հարկային ասպեկտ գլուխները ՀՀ հարկային օրենսդրության ընթերցումներն են՝ կոնկրետացված ազգային տնտեսության տեսադաշտի վրա իրականության հետ համադրման, պարզաբանումների և միջազգային փորձի հաշվառման առումներով: Դրանցում պիտի տեսնել «Հարկեր և հարկազանձում» աշխատության արժանիքները:

– 3 –

2009-ի մարտին լույս է տեսել Ա.Աղանբեգյանի «ԽՐՈՋՈՒՐ: ՈՎՊՈ Ռ. ԶՈՎՐ ՊՍ՝ ՀՏՐՈՒՌ» մենագրությունը: Դա ճգնաժամի սկիզբն էր, երբ հրապարակումներում ավելի շատ խոսում էին նրա պատճառների, հետագա հնարավոր միտումների մասին: Այն շարունակվում է առայսօր, ու թեև ընդլայնվել են մեր պատկերացումները ֆինանսատնտեսական ճգնաժամի վերաբերյալ, այնուամենայնիվ նրա «ելքի ու տևողության, իմաստով շատ կողմեր դեռևս մնում են չգիտակցված: Իրողություն են արդի ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերը երկրների «չօգտագործված հնարավորությունների» բացահայտման առումով: Այն փորձություն է, որի ընթացքում «...կհարատեն և կամրանան առավել ուժեղ, կենսակայուն բանկերն ու կազմակերպությունները, տեղի կունենա մի տեսակ բնական ընտրություն՝ որպես առաջընթացի հիմք»: Ճգնաժամը կկոփի միլիոնավոր մարդկանց դուրս գալու նրանից... շատերին «խելքի կբերի», կխորտակի դոգմաներն ու պատրանքները, կստիպի վերաիմաստավորել հին պատկերացումները, կենսական կարևոր դասեր կմատուցի ապագայի համար, պարզապես ճգնաժամը կմաքի և ցույց կտա զարգացման ավելի արդյունավետ ուղի նրանց, ովքեր դրանից օգտակար դասեր կքաղեն»¹: Հենց այս համատեքստում էլ նրա նոր աշխատության մեջ փորձ է արվում պատասխանել «Ինչ է մեզ սպասվում փոփոխություններից», «Ինչպիսին պիտի լինի մեր պահվածքը» և «Ինչի պատրաստվել» հարցերին: Չի կարելի ասել, թե Ռուսաստանի համար արդեն ավարտվել է անցման շրջանը: Հասարակական հաստատությունների, տնտեսական ու սոցիալական կառույցների ներքին որոնումները դեռևս շարունակվում են, ինչն ավելի է բարդացնում կացությունը: Շուկայական տնտեսությանն անցնելու հարյուր քայլից հազիվ կատարված է քառասունը: Տնտեսագետը հատկապես կարևորում է երկու առաջնահերթ խնդիրների լուծում. առաջին՝ անհրաժեշտ է անցնել հավասարակշռված տնտեսության, որտեղ ապրանքների և ծառայությունների, կապիտալի և աշխատուժի առաջարկը բավարարում է համապատասխան վճարունակ պահանջարկը և երկրորդ՝ կենտրոնացված պլանի և վարչարարական հարկադրանքի մեխանիզմը փոխել տնտեսությունը շարժող շուկայական պայմաններով և խթաններով²: Տնտեսագետը հատկապես կարևորում է երկրորդ խնդրի լուծումը, մինչդեռ երկրում ՀՆԱ-ի միայն քառասուն տոկոսն է ստեղծվում մասնավոր սեփականության հիմքի վրա: Տնտեսությունը շարժող շուկայական մեխանիզմը լավատեսական գնահատությամբ ձևավորված է երեսուն տոկոսի չափով: Ֆինանսատնտե-

¹ Аганбекян А. “Экономика России на распутье. Выбор посткризисного пространства”. М., 2010, с. 6-7.

² Նույն տեղում, էջ 180-181:

սական ճգնաժամի խորությունը նշանակալից չափով հետևանք է հենց շուկայի անգարգացածության: Ի վերջո «Ապացուցված է, որ պետությունը վատ առևտրական է, և մասնավոր սեփականությունն ամենուր ցուցադրում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման ավելի բարձր արդյունքներ»¹: Շատ են տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ Ադանբեգյանի աշխատության մեջ արված դիտողությունները, տեսակետներն ու առաջարկությունները: Անհրաժեշտ են համարում ներկայացնել ճգնաժամից ելքի դասեր ակնկալող նրա ընդհանրացումները.

- առանց «երկար փողերի», որպես ինվեստիցիաների, ֆինանսական և բանկային համակարգի կայուն հիմքի, երկիրը չի կարող ունենալ բարեհաջող և արդյունավետ ապագա, ուստի Ռուսաստանին անհրաժեշտ է անհապաղ ստեղծել խնայված «երկար» փողերի շուկայական ֆոնդեր,
- հիմնավոր կրճատել ինֆլյացիան՝ վրա հասած ստագֆլյացիան հաղթահարելու համար, ինչը պահանջում է սոցիալական համակարգի այնպիսի փոփոխություն, որը չի խթանի ինֆլյացիայի աճը,
- արտադրության իրական դիվերսիֆիկացիայի ռազմավարական պլանների մշակում և ճյուղերում հումքի վերամշակման ու պատրաստի արտադրանքի արտադրության իրականացում,
- արագ և համակողմանի բանկային համակարգի ամուր ծրագրի մշակում և իրականացում,
- զգուշանալ արտասահմանյան պարտքերի աճից, դրանք ավելի շահեկան պայմաններով փոխարինել սեփական փոխառու միջոցներով²:

Ա.Ադանբեգյանի աշխատությունը հարուստ է հարցադրումներով:

Սույն թեմատիկային վերաբերող հետազոտություններից է Վլադիմիր Հարությունյանի և Վիլեն Խաչատրյանի «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2010) աշխատությունը, որի «...նպատակն է հետազոտել և վերլուծել ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման, միտումների բացահայտման և կանխատեսումների իրականացման հայեցակարգային ու մեթոդաբանական հիմնախնդիրները, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկել ցուցանիշների միտումների բացահայտման և կանխատեսման արդյունավետության բարձրացման գիտականորեն հիմնավորված կառուցակարգեր, ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ տնտեսության մեջ մակրոտնտեսական քաղաքականության առանձին մեխանիզմների և գործիքների կիրարկման առանձնահատկությունները և տնտեսական հիմնահարցերի առկա իրավիճակն ու գնահատելով դրանց հետագա զարգացման միջոցառումներն ու հեռանկարները՝ անել առաջարկություններ ՀՀ տնտեսության կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունների մեղմման համատեքստում»³: Նկատենք, որ նշված հարցերի վերլուծությունը կատարվում է ծավալուն վիճակագրական տվյալների համակարգման արդյունքում՝ գիտության փորձով դրանք ստուգելով իրենց բազմակի կապերի ու առնչությունների մեջ: Արդի համաշխարհային զարգացման անհայտները շատ են ապագա միտումների համար ստույգ ու ժամանակի մեջ կանխատեսումները կատարելու համար, «տեղի են ունե-

¹ Նույն տեղում, էջ 184 (նկատենք, որ ռուս հասարակագիտական միտքը այսօր էլ կարևոր տեղ է հատկացնում պետական սեփականությանը՝ որպես շուկայական սուբյեկտի, տե՛ս «Литературная газета». 24-30 марта 2010, N 11):

² Նույն տեղում, էջ 280-294:

³ Վ.Հարությունյան, Վ.Խաչատրյան, Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., 2010, էջ 4:

նում մի շարք վերադասավորումներ, որոնք փոփոխելու են աշխարհի հիմնական դերակատարների դիրքերը» իրենց ազդեցությունն ունենալով աշխարհի պետություններից յուրաքանչյուրի ֆինանսական և տնտեսական համակարգերի վրա: Իսկ գրականության մեջ հնչող կանխատեսումների հոսանքի մեջ Հայաստանի Հանրապետությունը մոտակա տարիների մակրոտնտեսական կայունության ապահովման համար պետք է ունենա իր կանխորոշումները: Վ.Հարությունյանի և Վ.Խաչատրյանի կարծիքով դրանք հանգում են հետևյալին.

- զուգակցելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները՝ առաջնությունը որպես խթանիչ լծակի հատկացնել հարկաբյուջետային քաղաքականությանը,
- միայն պետական բյուջեի միջոցով տնտեսական աճի ապահովումը հանրապետության համար ներկայանում է ոչ իրատեսական, ուստի առավել արդյունավետ ուղին գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծումն է, որը մեծապես կնպաստի համախառն ներքին պահանջարկի խթանմանն իր բազմարկիչ շարունակության մեջ,
- պետական ներդրումային ծրագրերն ուղղորդել դեպի այն ձեռնարկությունները, որոնք ունեն արտահանման ուղղվածություն, և պարզեցնել այդ բնագավառի օրենսդրական «քաշքշուկների համակարգը»,
- լիզինգային, վարկային ծրագրերի, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանն ուղղված ռացիոնալի որոնումների հոր լուծումների իրականացումը և այլն:

Ինչպես Ա.Աղանբեգյանի, այնպես էլ Վ.Հարությունյանի և Վ.Խաչատրյանի աշխատություններում տնտեսական ժամանակի շարժումը գերազանցապես արտահայտվում է թվերով: Իսկ ինչպես ասում են, թվերով երկիր չեն կառավարում, բայց թվերը ցույց են տալիս, թե երկիրն ինչպես են կառավարում:

– 4 –

Պոլ Հեյնեն «Տնտեսագիտական մտածելակերպ» աշխատությունն ավարտում է «տնտեսագիտության սահմաններից դուրս» այսպիսի մի ընդհանրացմամբ. «Տնտեսագետների մեծ մասն ընդունում է, որ իրենց կողմից կիրառվող հասկացությունները և մեթոդները երբեմն խեղաթյուրում են իրենց կողմից ուսումնասիրվող իրականությունը: Նրանք պատրաստ են իրենց վերլուծությունը և եզրակացությունները հանձնել ռացիոնալ քննադատության դատին: Բայց ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտություններում ցանկացած հետազոտության մեջ անհրաժեշտ է ընդունել ինչ-որ տեսակետ: Եթե տնտեսագիտական մտածելակերպը երբեմն հանգեցնում է աղավաղման, ոչ ճիշտ շեշտադրումների և անգամ ակնհայտ սխալների, ռացիոնալ քննադատությունը պետք է անհրաժեշտ ուղղումներ կատարի: Նման ուղղումները հաճախ հերքում կամ ձևափոխում էին անցյալի տնտեսագետների եզրակացությունները: Հավանաբար, այդպես կշարունակվի նաև ապագայում»¹: Ի վերջո, տնտեսագիտական բոլոր դպրոցներն էլ փորձել են կյանքի տնտեսական լուծումները քննության ենթարկել ռացիոնալի տեսանկյունից, երևույթների իմացաբանական չափանիշները ենթարկելով ճանաչողության որոշակի սկզբունքների: Եվ որքան էլ «ռացիոնալ քննադատությունը» փորձում է հաղթահարել ռացիոնալի և ոչ ռացիոնալի խզումները, այնուամենայնիվ այդ ճեղքվածքը շարունակում է տեղ ունենալ, իսկ արդյունքում տնտեսական պրոցեսները, ըստ էության, ճիշտ մեկնաբանություն չեն ստանում: Բրիտանացի հայտնի փիլիսոփա, սոցիոլոգ Կառլ Պոպերը, մի երկար ուղի գծելով ռացիոնալիզմի ու իռացիոնալիզմի վեճի պատմությանը, նկատում է, թե «...մարգարեական իռացիոնալիստներից մեկը հաստատել է (մանավանդ

¹ Պոլ Հեյնեն, Տնտեսագիտական մտածելակերպ, Եր., 2008, էջ 676:

Beryson-ի ու գերմանական փիլիսոփաների ու ինտելեկտուալների մեծ մասի միջոցով) ռացիոնալիստի մեծ նսեմ արարածներին անտեսելու կամ փնովելու մի սովորություն: Սրանց համար ռացիոնալիստները (կամ «մատերիալիստները», ինչպես իրենք են հաճախ ասում) ու մանավանդ ռացիոնալիստ գիտնականները հոգով աղքատ են ու հետամուտ են անհոգի ու մեծ մասամբ մեխանիկական գործերի ու լրիվ անտեղյակ են մարդկային ճակատագրի բազմաթիվ խնդիրներին ու փիլիսոփայությանը: Ռացիոնալիստներն էլ մեծ մասամբ ասում են, թե իռացիոնալիզմը բացարձակ անհեթեթություն է»: Իր հայեցության մեջ Պոպերը «կանխակալ» է և «լրիվ կողմ է» ռացիոնալիզմին¹: Ստեղծվում է այն պատկերացումը, թե երևույթների ուսումնասիրության հարցում այն, ինչ վերաբերում է իռացիոնալին, գիտությունից դուրս է: Մինչդեռ, ինչպես նկատում է Հ.Ադաջանյանը. «...հասարակական երևույթների ներքին պատճառականության վերաբերյալ մեր պատկերացումներն ամբողջապես բացահայտված չեն: Այս համատեքստում դիտարկելով մուտացիոն գործընթացները՝ պարզ է դառնում, որ դրանց ներքին դրդապատճառների առումով իռացիոնալ վարքագիծն էական դերակատարություն ունի»²: Մուտացիաները պայմանավորված են ենթագիտակցական, հոգեբանական, սոցիալական, քաղաքական, մշակութային բազմաշերտ գործընթացների անկանխատեսելի հետևանքներով, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերում օրինաչափություն՝ համակարգը ենթարկելով համապատասխան արժեքային փոփոխության: Մերժելով իռացիոնալությունը զուտ փիլիսոփայության, այլ ոչ թե մարդու կենսագործունեության իրական հատկանիշ դիտելու մտայնությունը՝ Հ.Ադաջանյանը մուտացիայի և իռացիոնալության դրսևորումները դիտում է որպես հասարակության պատմության մշտական ուղեկիցներ: Մուտացիայի երևույթները կարող են պայմանավորված լինել տարբեր պատճառներով՝ ռեսուրսների սահմանափակություն, արժեքային համակարգի փլուզում, հասարակական կյանքում առկա տարբեր տեսանկյունի և անտեսանելի հակասություններ, քաղաքակրթական տարբեր մակարդակների առկայություն, արտաքին տարաբնույթ ազդեցություններ և այլն: Մուտացիայի երևույթն ուղեկցել է հասարակությանը նրա ամբողջ էվոլյուցիայի ընթացքում, սակայն ժամանակակից տեխնոլոգիական դարում ընդլայնվել են և՛ մուտացիաներ ծնող դրդապատճառները, և՛ մուտացիաների ռիթմը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ի հայտ գալով փոխվել են ժամանակի ու տարածության ընկալման պատկերացումները: Փոխվել է «մարդկային կյանքի հիմնարար չափողականությունը», և հոսքերի այդ տարածության մեջ այլ դրսևորումներ են ստանում հասարակության սոցիալական շերտավորումը, մարդկային փոխհարաբերությունները, իշխանության, հասարակության, սովերային գործունեության մասշտաբները, ֆինանսական հոսքերի հսկողությունը, հասարակության կառավարման էլիտար համակարգը, որոնք իրենց բնույթով մուտացիոն գործընթացի (դրական կամ բացասական) մի ամբողջություն են ներկայացնում³:

Համաձայն հավանականության տեսության՝ տարածությունը և ժամանակն ինքնուրույն առանձին էություններ չեն, այլ միասին կազմավորում են տարածաժամանակային կոնտինիում: Տեղեկատվական հոսքերի արագացման արդյունքում տեղի է ունեցել տարածաժամանակային խտացում՝ բարձրացնելով սոցիալական գործընթացների ինտենսիվացումը: Հ.Ադաջանյանը՝ որպես իր առաջադրույթի գործակից, անդրադառնում է Մ.Կաստելսի հայեցությանը և այս առումով որոնումների ընդհանուր ուղղությունն իրավացիորեն իմաստավորելով նրա այն արտահայտությամբ, թե «Կապիտալը ոչ միայն սեղմում է ժամանակը, այլև

¹ Սրբ Կառլ Ռայմունդ Պոպեր, Բաց հասարակությունն ու դրա թշնամիները, հատոր 2, 2006, էջ 222:

² Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2008, N3, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 12-13:

ներծծում է այն»¹: Խոսքը միայն ֆինանսական հոսքերի կամ աշխատանքի արտադրողականության քանակական չափակցում ենթադրող փոփոխությունների մասին չէ: Հենց այս իմաստով էլ երևույթների շարժումը՝ կապված մարդու հոգեբանության, աշխարհընկալման և արժեքային համակարգի մուտագիոն փոփոխության հետ, ընդհանրացնում է, թե «Տեղեկատվական հոսքերի, կապիտալի կերպափոխման մեծ արագության, կենսաբանական ժամանակի, մարդու աշխատանքային գործունեության, սոցիալական կառուցվածքի, հակասությունների և հակամարտությունների լուծման ձևերի փոփոխության, բնակչության տեղաշարժի նոր դրսևորումների, ժամանակի և տարածության, ինչպես նաև կյանքի փիլիսոփայության նոր ընկալումների պայմաններում դժվար է ենթադրել, թե ինչ նոր «վայրիվերումներ» կարող են լինել»՝ նպաստելով մուտագիաների շարունակականությունը²: Հասարակության պատմությունը ռացիոնալի և իռացիոնալի գուգահեռ պատմություն է, անկախ նրանից, թե ինչ հատկանիշների միջոցով են ներկայացվում սոցիալական զարգացումները: Հ.Ադաջանյանը, վկայակոչումներ կատարելով Մ.Կաստելսի, Կ.Փոլանի, Դ.Շտոմկայի, Գ.Մարկագեի, Է.Թոֆլերի և այլ հեղինակների աշխատություններից, ցույց է տալիս, որ հասարակական կյանքում մուտագիաները բարդ հոգեբանական, քաղաքական, մշակութային քաղաքակրթական տրանսֆորմացիայի արդյունք են: Շարունակականության իմաստով մուտագիայի համար առանցքայինը մարդու իռացիոնալ պահվածքն է, հետազոտությունների արդյունավետ գործողությունները, քառսի ձևավորումը և անսպասելի գործընթացների հաղթահարման մեխանիզմների բացակայությունը: Անտեսել մուտագիոն գործընթացների դերը, նշանակում է իռացիոնալը դիտել գիտության սահմաններից դուրս: Այսինքն, ոչ թե բացասման վերացական սկզբունքը, այլ երևույթի իմացությունը դեպի ճշմարտության բացահայտումը: Սակայն, քանի որ ռացիոնալն ու իռացիոնալն անջատված են հեռավորությամբ, ուստի մարդիկ իրենց պահվածքում գործում են իրական կյանքի թելադրանքով: «Հայտնի ճշմարտություն է, – նկատում է Ս.Սարինյանը, – որ բնությունը չի իրագործում կատարելության գաղափարը կոնկրետ մի երևույթի մեջ: Այս իմաստով բացարձակը կարելի է գիտակցել միայն մետաֆիզիկորեն: Հանգամանք, որ գծում է հարաբերականության սահմանը երևույթների ճանաչման հարցում: Բայց ընդունենք հարաբերականի դրական սկիզբը, որը երևույթի իմացությունն ուղղորդում է դեպի ճշմարտության բացահայտում, ի հակադրություն բացասման վերացական, մտահայաց սկզբունքի: Ժամանակին Նալբանդյանը հեզնում էր իր մտահայաց բացասումի իռացիոնալ հրճվանքը: Ես սովորական ճաշ եմ ուտում, ասում է նա, իսկ իմ ընկերը հրաժարվում է դրանից՝ արդարանալով, թե մտքում ավելի կատարյալ ճաշի գաղափար ունի՝ «Դե, սատկեցեք քաղցած»: Իսկ մեկ այլ իդեալիստ հրաժարվում է ամուսնանալուց, քանզի չի գտնում մեկին, որը Աֆրոդիտեի կամ Բելվետերյան Վեներայի գեղեցկությունն ունենա»³:

Ժամանակակից հիմնարար գիտությունները հասել են ճանաչողական հսկայական նվաճումների ու նոր որոնումների՝ փորձելով հաղթահարել ռացիոնալի ու իռացիոնալի հավիտենական տարանջատման սահմանը: Սակայն ինչպես մի առիթով նկատել է Դոստոևսկին. «Եթե ինձ մաթեմատիկորեն ստույգ ապացուցեն, որ ճշմարտությունը Քրիստոսից դուրս է, ես կգերադասեմ մնալ Քրիստոսի, այլ ոչ թե ճշմարտության հետ»:

¹ Նույն տեղում, էջ 13:

² Նույն տեղում, էջ 14:

³ «Գրական թերթ», 5 հուլիսի 2009թ. (Ս.Սարինյանը մի այլ առիթով նկատել է, թե «Հայտնի է փիլիսոփայական նշանաբանը՝ «Ամեն բան ենթարկիլի կասկածի»: Բայց սա իրական է բոլորովին այլ մակարդակներում: Եթե ճանաչման պրոցեսը ենթարկենք կասկածող պայմանականության, այդ պարագայում աշխարհն առհասարակ կներկայանա որպես մի իռացիոնալ զանգված»): (Տե՛ս Հայոց գրականության երկու դարը, Եր., 2004, էջ 407):

Վերջերս լույս է տեսել Հ.Ադաջանյանի հետազոտությունը ռացիոնալի և իռացիոնալի սահմանի վերաբերյալ, որտեղ հեղինակը սրում է հասարակական առաջընթացի ռացիոնալիստական մեկնության վերախմաստավորման պահանջը¹։ Ինչպես հայտնի է, դասական և նեոդասական տնտեսագիտության ներկայացուցիչների տեսադաշտում տնտեսական մարդը ռացիոնալ է իր գործողությունների և որոշումների կայացման ժամանակ՝ նպատակ ունենալով հասնելու առավելագույն օգտակարության՝ իր ամենալայն իմաստով։ Մինչդեռ հենց իրական շփումների մեջ ի հայտ են գալիս ռացիոնալիստական կոնյունկտուրայի հավաստիության ճեղքվածքները։ Թ.Վերլենը, քննադատելով մարդու պահվածքը՝ որպես «դժվարության վիճակում ռացիոնալ ռեակցիայի հայեցությունը», վերանայում է «տնտեսական մարդու» գեղոնիստական հայացքը, ըստ որի նա ղեկավարվում է սեփական շահի մաքսիմալացման սկզբունքով, որպես կանոն, հավասարակշռության մեջ գտնվող մեկուսացված սուբյեկտի, որը «ոչ անցյալ ունի, ոչ էլ ներկա» և իր գործողությունները մշտապես ենթարկում է Բենթամի օգուտի թվաբանությանը։ Ջսկոնս-Մարշալի բարեկեցության տեսությունը, թե իբր կատարյալ մրցակցությունը, այսինքն՝ պահանջարկի ու առաջարկի ազատ խաղը տանում է օպտիմալ արդյունքների, ոչ այլ ինչ է, քան status quo-ի ջատագովություն։ Սպառողի ինքնության և նրա ռացիոնալ պահվածքի մասին դրույթները, Վերլենի կարծիքով, չի կարելի հավաստի համարել։ Իսկ Ու.Միտչելը նկատել է, թե «Մենք՝ գիտնական հումանիտարներս, տառապում ենք խելացնության հետաքրքիր ձևով։ Մենք գիտակցում ենք, որ տնտեսական, քաղաքական և իրավական գիտությունների օրթոդոքսալ դոկտրինաները հանգչում են այն ոչ ակնհայտ ենթադրության վրա, որ մարդու պահվածքը ենթակա է ռացիոնալ հաշվարկի սկզբունքին։ Այնուհետև մենք սկսում ենք հասկանալ, որ այդ ենթադրությունը հակասում է իրականությանը։ Մակայն պարզվում է, որ մեզ դժվար է թոթափել հին սխալները, չխոսելով արդեն այն մասին, որպեսզի օգտագործենք նոր գիտելիքներ»²։

Ըստ Վ.Պարետոյի՝ մարդկանց բոլոր գործողություններն իրական կյանքում ենթակա են տրամաբանականի (նպատակների և միջոցների ռացիոնալ համապատասխանության) և անտրամաբանականի զուգորդմանը։ Նա նշում է մարդկանց բնագոյային գործողությունները պայմանավորող վեց հիմնական խմբեր (արտադրողական բնույթի բնագոյների կամ տրամաբանությունների ամբողջությունը, մարդկանց միջև կամ մարդկանց և իրերի միջև կայուն հարաբերություններ արտահայտող բնագոյները, ինքնարտահայտության բնագոյները, օրինակ՝ կրոնը, հասարակական բնագոյները, որոնց օրինակ է տալիս ինքնագոհողությունը, ձգտումների և ինքնապահպանության հետ կապված բնագոյներն ու տրամադրությունները, սեռական բնագոյները), որոնք, կազմելով մարդկային գործողությունների իռացիոնալ հիմքերը, պայմանավորում են նաև ռացիոնալի և իռացիոնալի սահմանը³։

Հ.Սայմոնը դեռևս 1950-ական թվականներին գրված աշխատություններից մեկում նկատել է, թե հոգեբանության և սոցիոլոգիայի նորագույն հետազոտությունները գալիս են մերժելու մարդկանց գործունեությունները ռացիոնալիստական դիտելու կարծիքները՝ առաջադրելով սահմանափակ ռացիոնալության սկզբունքը։ Իսկ «...եթե տնտեսագետների մեծ մասը տվյալ կոնցեպցիային վերաբերվեր նույնքան կասկածամտորեն, որքան Սայմոնը, Պարետոն, Միտչելը և Վերլենը, ապա մեր գիտությունն առաջ ընթանալու մեծ քայլ արած

¹ Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, 2005թ., N1,3, 2006թ., N1,2,3, 2007թ., N3:

² Джеффри Ходжсон “Экономическая теория и институты”, М., 2003, с.155.

³ Селичмен Б. “Основные течения современной экономической мысли”, М., 1968, с. 251.

կլիներ»¹: Տ.Սկրտչյանը կարևորում է այդ կարգի վերլուծությունների դերը տնտեսագիտության գիտականացման հետագա ուղու առումով: Որոշումների ընդունման գործընթացի վրա ազդող շեղումները բազմաթիվ են (տիրապետման էֆեկտ, հիպերբոլիկ դիսկոնտավորում, իռացիոնալ տարածում, կորստի նկատմամբ անտարբերություն, հավանականության արհամարհելը, կեղծ որոշակիության, խաբսիսման, անորոշության էֆեկտները և այլն), որոնք և պատճառ են դառնում լավագույն տարբերակի ընտրության շեղումների համար: Այստեղից էլ, նկատում է Տ.Սկրտչյանը, ռացիոնալ ընտրության դոկտրինան ճշմարտության ըմբռնումից հայտնվում է հակասությունների բանաձևի առաջ. դասական տնտեսագիտությունը հակասություն չի տեսնում «ինչ եմ անում» և «ինչ եմ ցանկանում անել»-ի միջև, մարդիկ սովորաբար կատարում են նույն իռացիոնալ ընտրությունը, քանի որ նույնիսկ անսահմանափակ տեղեկատվության պայմաններում «սովորելու» հնարավորությունները սահմանափակ են, «...որքան շատ են ընտրության տարբերակները, այնքան որոշման ձախողման հավանականությունը մեծ է»²: Նա ռացիոնալ ընտրության վարքագծային մոդելի վերաբերյալ իր դիտողությունների հավաստիությունը հաստատում է Ջ.Ալերոյի «կիտրոնների շուկայի», Ս.Մալեյնաթանի պահի ազդեցության, Վաների շարժառիթների և պատասխան արձագանքի միջև կապի բացակայության, նեյրոտնտեսագիտության և փորձարարական տնտեսագիտության այլ նվաճումների վկայակոչումներով, որոնք, հակասելով ընտրության դասական տեսության կանխադրյալներին, իրենց հիմքում ունեն սահմանափակ ռացիոնալության սկզբունքը:

– 5 –

Շուրջ չորս տասնամյակ առաջ գերմանացի գիտնական Գերման Հակենը շրջանառության մեջ է դնում սիներգետիկա հասկացությունը: Այն, որպես փոփոխության նոր ունիվերսալ տեսություն և միջառարկայական հետազոտությունների ուղղություն, նպատակ ունի հաղթահարել ժամանակակից գիտության մասնատվածությունը և գիտական իմացության մասնագիտացումն ու հյուլեացումը, ինչի արդյունքում կորչում է մարդու ներդաշնակ ինքնագարգացման համար այդքան անհրաժեշտ աշխարհի ամբողջական պատկերը³:

Հակենը, բացի ֆիզիկայից, քիմիայից և կենսաբանությունից, սիներգետիկայի մեխանիզմների միջոցով աշխարհի նկարագրության ուղեծրի մեջ⁴ ներառում է նաև սոցիոլոգիան և տնտեսագիտությունը: Կարելի է բազմաթիվ վկայակոչումներ կատարել տնտեսագետներից, որոնք զուգահեռներ են գծում բնական գիտությունների և տնտեսագիտության օրենքների միջև և դա, հավանաբար, շնորհիվ այն բանի, որ «...տնտեսական համակարգը՝ տնտեսագիտության առարկան, այնքան շատ ընդհանրություններ ունի բնագիտության շրջանակներում ուսումնասիրվող ֆիզիկական համակարգերի հետ»⁵:

XIX – XX դարերի տնտեսագիտական դպրոցների հաջորդափոխության արդյունքում տնտեսական երևույթները, կապերը ենթարկվել են վերլուծական որոշակի չափումների, առաջադրվել են բանաձևեր, որոնցով փորձ է արվել կարգավորել տնտեսական կյանքը: Սակայն, ի դեմս սիներգետիկայի տեսության, տնտեսագիտությունը մեթոդաբանական վերակառուցման կարիք ունի: «Ակնհայտ է, – նկատում է Ա.Մարգարյանը, – որ տնտեսագիտական հետազոտությունների ոլորտը չի կարող սահմանափակվել ավանդական նեոդասական, քեյնսյան կամ դրանց հիմքի վրա գոյացած այս կամ այն համակցությունը ներառող մեթոդաբանական մոտեցումներով: Սրանք տնտեսական համակարգը ներկայացնում են որպես

¹ Джеффри Холдсон, *նշվ. աշխ.*, մեջ, էջ 160:

² Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2009, N3, էջ 20-21:

³ Василькова, Яковлев И.П. и др. “Волновые процессы в общественном развитии”, Новосибирск, 1992, с.47.

⁴ Хакен Г. “Синергетика”, М., 1980, с. 281.

⁵ Титова Н.Е. “История экономических учений”, М., 1997, с.250-251.

հարաբերականորեն փակ համակարգ, իսկ արտաքին ազդեցությունները, ինչպես նաև ներքին տատանումների ներգործությունները, դիտարկվում են որպես զարգացման գործընթացի նկատմամբ չեզոք գործոններ: Այնինչ տնտեսական համակարգն իր բնույթով բաց, էվոլյուցիոն համակարգ է, որի վարքագիծն անհնար է լիարժեքորեն նկարագրել, առավել ևս՝ նրա զարգացման հնարավոր այլընտրանքների վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումներ անել՝ հենվելով սոսկ ավանդական պատճառական (դետերմինիստական) մեթոդաբանության վրա»¹: Այս առումով արդեն վերջին տասնամյակների իրադարձությունները տեսության մեջ ստացել են որոշակի ուղղություն՝ կարծես նախանշելով հին և նոր տեսությունների բաժանման ժամանակը: Այսպես՝ «ռացիոնալ ընտրության» վարկածը, որն ընկած է ավանդական տնտեսագիտական պարադիգմի (մեյնսթրիմի) հիմքում, կտրվածություն է հայտաբերում իրական շուկայական գործընթացներից, կամ վերանայվել են ընդհանուր տնտեսական հավասարակշռության վերաբերյալ պատկերացումները:

Ա.Մարգարյանը նկատում է, որ սոցիալ-տնտեսական համակարգի վարքագիծը կտրուկ որակական փոփոխությունների փուլում սկզբունքորեն տարբերվում է էվոլյուցիոն զարգացման փուլի վարքագծից, ինչը ոչ գծային շարժընթացի ու անհավասարակշռության վրա հիմնված պահանջների նկարագրումն ավանդական մոտեցումներով դարձնում է անհնար: Մինչդեռ նրա կարծիքով սիներգետիկ մոտեցումը հնարավորություն կտա գտնել շուկայական կոնյունկտուրայի օրենքներով գործող ոչհավասարակշռված տնտեսական համակարգերը կառավարելու արդյունավետ մեխանիզմներ:

*

* *

Ռուս հայտնի բանաստեղծ Ա.Ս.Պուշկինը նկատել է, թե «Ռուսաստանը երբեք ոչինչ ընդհանուր չի ունեցել մնացած Եվրոպայի հետ, նրա պատմությունն այլ խորհուրդ, այլ բանաձև է պահանջում»: Ամերիկյան ռուսագետ Ռ.Փայփսը հենց այդ դիտակետից Ռուսաստանի հիմնական տարբերությունը Եվրոպայից տեսնում է ռուսական կյանքի ազգային հայրենակալվածքային կացութաձևի մեջ, որտեղ իշխանությունը և սեփականությունը կենտրոնացած են միապետի ձեռքում, մինչդեռ Եվրոպայում մասնավոր սեփականության հաստատությունը բուրժուական հեղափոխությունից հետո, ըստ էության, դարձել է ինքնուրույն կառավարող ուժը: Ինչպես լրացնում է Ա.Կազինը, դրա արդյունքում ոչ թե սեփականությունն է սկսել պատկանել մարդկանց, այլ մարդիկ դարձել են իրենց սեփականության կցորդը, այդպիսին է գովաբանած արևմտյան կապիտալիզմի տխուր պարադոքսը²: Ռուսաստանի մշակութային-պատմական այդ առանձնահատկությունը շեշտել են նաև XIX դարի ռուս հասարակագիտական մտքի շատ ներկայացուցիչներ: Հայտնի է, որ ճորտատիրության վերացումից հետո երկրի ազատականացման ուղղությամբ իրականացվող դժվարությունները, հատկապես, կապված էին գյուղում մասնավոր սեփականության հաստատության արմատավորման հետ: Դեռևս այսօր էլ Ռուսաստանի համար այն օրակարգի հարց է: Փիլիսոփա Ա.Կազինը նկատում է. «Ո՛չ, հարգելի՛ լիբերալ պարոնայք, այստեղ խոսքն արդեն ոչ թե առաջավոր արևմտյան երկրներից լոկ հետ մնալու մասին է (առավել ևս մեկ-երկու սերունդ, ինչպես ենթադրում էր Ե.Գալդարը): Եթե դա հետ մնալ է, ապա հինգ հարյուր տարով, իսկ դա արդեն ոչ թե հետ մնալ է, այլ ուրիշ քաղաքակրթական ուղի»³: Իսկ Պ.Գուրևիչը խոսում է նախախորհրդային Ռուսաստանի տնտեսական կապերում, այսպես

¹ Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2007, N3, էջ 53:

² Литературная газета, 21-27 июля 2010, N 29.

³ Նույն տեղում:

կոչված, «ազնիվ առևտրականի խոսքի» երևույթի մասին: Ռուսաստանի հայտնի պետական գործիչ Ս.Վիտեն գրում է, որ պետության շրջանառության մեջ գտնվում են շուրջ 50 միլիոն առևտրական փողեր՝ տրված ազնիվ խոսքի դիմաց: Առևտրական, վարկավորման և այլ ֆինանսական գործարքների համար հաճախ բավական էր ազնիվ առևտրականի խոսքը: Վերջինս նույնքան «նշանակություն ուներ, ինչպես որ բուրժուական միջավայրում ազնվականական պատիվը»¹:

Սրանք լոկ թռուցիկ դիտողություններ են՝ կատարված նոր պատմական դպրոցի և վերլեկյան ինստիտուցիոնալիզմի ոգով, որով որպես թե «սեղանի շուրջը նստելու կանոններն» էլ կարևոր են տնտեսական կյանքի ճանաչողական առանձնահատկությունների բացահայտման և տնտեսական արդյունավետության առումներով: Տնտեսագիտական մտքի հայտնի պատմաբան Բ.Մելիզմենը գրում է. «...միանգամայն ակնհայտ է, որ տնտեսական աճը չափազանց բարդ երևույթ է: Տնտեսական աճն արտահայտող տեսությունը պետք է հաշվի առնի բնական ռեսուրսները, քաղաքական օրենսդրությունը, ինչպես նաև բազմաթիվ հոգեբանական և սոցիալական գործոններ: Այդպիսի համապարփակ տեսության մշակումը գրեթե անիրագործելի խնդիր է ներկայանում»²: Ինչպես ակներև է, հեղինակը շեշտում է տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության բազմակի կապերի հանգույցներում կողմնորոշվելու և իրենց փոխներգործության մեջ դրանք ամբողջացնելու դժվարությունը: Այնուամենայնիվ, հենց այդ ենթատեքստում է Ա.Մարգարյանն անդրադառնում ազգային նորամուծական համակարգի ձևավորման տեսամեթոդական հիմքերի քննությանը՝ ցույց տալով ժամանակի հետ հայացքների էվոլյուցիան: Ա.Մարգարյանն առանձնացնում է երկու շրջան՝ 1930-70-ական թվականներ և 70-80-ական թվականներից սկսած: Առաջինին բնորոշ էր տեխնոլոգիական զարգացման գծային դետերմինիստական սկզբունքի գերակայությունը, որը ենթադրում է «գիտություն - տեխնիկա - տեխնոլոգիա - արտադրություն» շղթան: Այդ հայեցողությունն իր հիմքում ուներ ժամանակաշրջանի տիրապետող երկու հիմնական ուղղությունների՝ նեոդասականության և քեյնսյան տեսությունների տեսական դրույթները, որպես թե «տեխնոլոգիան և գիտելիքները տնտեսական աճի նկատմամբ արտածին (էկզոգեն) գործոններ են, և տնտեսական համակարգն իր շարժիչ ուժի՝ մրցակցության մեխանիզմի միջոցով շուկայում մրցակցող ընկերություններին պարտադրում է կիրառել տեխնոլոգիական նորամուծություններ»: Սակայն 70-80-ական թվականների գիտատեխնիկական առաջադիմության արագընթաց տեմպերը՝ տեխնոլոգիական նորարարության գործոնների ազդեցությամբ տնտեսագիտական միտքը դիմորոշեց դեպի խնդրի ավելի համակարգված ու համալիր մոտեցման: Առաջադրվեց ազգային նորամուծական համակարգի (ԱՆՀ) ստեղծման ու զարգացման հիմնադրույթը: Հազիվ թե կարելի է վկայակոչել մի բնորոշում, որն ամբողջական արտահայտի ԱՆՀ-ի բնույթն ու ընդգրկման ծավալները, այնուամենայնիվ դրանցում այն բնութագրվում է որպես ինստիտուտների ամբողջություն, որոնք կոչված են նորարարական գործընթացների իրականացմանը, ոչ թե գծային-շղթայական, այլ «ցանցային մոդելի» գործողության շրջանակ-

¹ Նույն տեղում, 2-8 июня 2010, N 22 (Այստեղ ուզում են վկայակոչել մի դրվագ՝ կատարված իմ հայրենի ԼՂՀ Սեյդիշեն գյուղում: 1920-ական թվականներին՝ ՆԷՊ-ի շրջանում, Ղախրամանյանների ընտանիքը գյուղում կառուցել էր մետաքսի գործարան, որը գյուղական կենցաղում առաջ էր բերել նկատելի տեղաշարժեր և՛ նյութական օժանդակության, և՛ կապերի, և՛ ընդհանուր պահվածքի առումներով: Գործարանի համար հումքը հիմնականում ստանում էին Միջին Ասիայից: Ֆինանսական հաշվարկները կատարվում էին «ազնիվ առևտրականի խոսքի» սկզբունքով: Պատմում են, որ գործարանատերը արդեն արքայից տեղեկացնում է հումքի դիմաց մնացած պարտքը՝ 100 ոսկին մարելու համար: Տոհմի կանանցից մեկը այն կարում է արխայուղի փեշին, որը պիտի Կասպից ծովով տեղ հասցներ: Մատակարարը ոսկին ստանում է, սակայն մեկով պակաս և տարակուսանքով ասում, թե այդպես չի կարող լինել. ես վստահում եմ Ղախրամանյանին: Ինչպես պարզվում է, այդ կինը ճանապարհին մի գիշեր հյուրընկալվել էր Բաքվում, որտեղ էլ տանտիրուհին...):

² “Экономическая теория” // под общей редакцией М.Н.Чепурина и Е.А.Киселева, М., 2002, с.557.

ներում, որի հաջողությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ միջավայրի գործոններով¹: Ա.Մարգարյանն ազգային տնտեսության արդիականացման և դեպի նորամուծությունների զարգացման վերակողմնորոշման ուղի է գծում նաև Հայաստանի Հանրապետության համար:

Կարծես թե զարգացող երկրները կարող են հայտնվել բարենպաստ պայմաններում զարգացած երկրների կառավարման փորձի կիրառման, հաստատությունների և բարձրակարգ տեխնոլոգիաների փոխառման հնարավորությունների և այլ առումներով:

Ընդհանրապես, տեսական դրույթները ճշմարիտ են միայն տեսության մեջ: Եվ հազիվ թե կարելի է համահարթել և իրավացի դիտել համաշխարհային տնտեսության զարգացման մեջ ինովացիայի դերի գնահատման այն ընդհանրացումը, թե հեռանկարում «Արևմուտքի և մնացած աշխարհի միջև դիմակայություն գոյություն չունի, չկա զարգացող և զարգացած քաղաքակրթությունների ընդհարման վտանգ, զարգացումը մոտակա տասնամյակներին կունենա անհավասարաչափ, տուրբուլենտ բնույթ՝ պայմանավորված ուշ ինդուստրացման երկրների առավել արագ զարգացմամբ և ինտենսիվությամբ, ինովացիոն տնտեսության անկայուն զարգացմամբ, և վերջին հաշվով շուկայական ուժերը կտանեն երկրների համահավասարեցմանը և դարավերջին կարելի է սպասել, որ այն երկրներում, որոնց բաժին է ընկնում մոլորակի բնակչության 80-85 տոկոսը, մարդիկ կապրեն ավելի բարեկեցիկ և կայուն պայմաններում, կյանքի մակարդակի, հասարակությունների և մշակույթի քիչ տարբերություններով»²:

Իրողությունն այն է, որ շահում են այն երկրները, որոնք համաշխարհային տնտեսության տեխնոլոգիաների բրգաձև հիերարխիայում զբաղեցնում են վերին հորիզոնականները: Իսկ զարգացող և կերպավորվող երկրների գերակշիռ մեծամասնությանը փաստորեն բաժին է ընկնում «համաշխարհային եկամտի» չնչին մասը, եթե չասենք՝ սակավ մնացորդը: Սրանց, շարունակում է Ա.Մարգարյանը, ավելի շուտ, մնում է ավանդական ռեսուրսների և որակյալ (սակայն էժան) մարդկային կապիտալի մատակարարի՝ ռազմավարական առումով անշահավետ գործառույթը, հնացած կամ, հնարավոր է, առաջնակարգ, սակայն, էկոլոգիապես վտանգավոր տեխնոլոգիաների յուրացում – նմանակումը և այլն³:

ԱՄՆ-ը արտադրում է համաշխարհային ներքին արդյունքի 20 տոկոսը, սակայն սպառում է 40 տոկոսը: Սա է համաշխարհային եկամտի բաշխման արդի սկզբունքը զարգացած և զարգացող երկրների միջև: Ինչպես բնությունը, այնպես էլ հասարակությունը գործում են անհավասարության օրենքով:

Գերմանացի տնտեսագետ Կ.Մարքսը նկատել է. «Բավական չէ, որ միտքը ձգտի մարմնավորվելու իրականության մեջ, ինքը՝ իրականությունը պետք է ձգտի դեպի միտքը»: Հենց այս վերջին հանգամանքով պիտի բացատրել, որ Արևմուտքի «ազատական բարեփոխումների» առաքելությունը, որը պարտադրվեց պատմամշակութային ու հասարակական այլ նախադրյալների առումով անպատրաստ երկրների, իր գործնական իրացումներում ունեցավ հակառակ արդյունքները՝ այդ երկրների համար գծելով մշտական «անցման» շրջանում գտնվելու ուղին»:

Խոսքը, հատկապես, վերաբերում է ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ կապված դժվարություններին: ԽՍՀՄ փլուզումն ավերիչ էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ խորհրդային նախկին հանրապետությունների համար. վերացան ապրանքների իրացման ավանդական շուկաները, խզվեցին երկարատև ժամանակում ձևավորված կոոպերատիվ

¹ Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2009, N3, էջ 10:

² “Вопросы экономики” // 2009, N9, с. 30-31.

³ Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2009, N3, էջ 15:

կապերը մատակարարների միջև, ի հայտ եկած նոր պետական սահմանները խոչընդոտում էին ապրանքների, գիտելիքների, կապիտալի և աշխատուժի անարգել տեղաշարժերը: Ա.Մարկոսյանը և Մ.Մանուկյանն իրավացիորեն շեշտում են, որ եթե ընկերությունների գործունեությունը, կազմակերպական կառուցվածքը և կառավարման մեխանիզմները ներդաշնակ չեն երկրի սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ միջավայրին, ապա տնտեսական բարեփոխումները կոչված են լույս ժամանակավոր խնդիրների լուծմանը. «...ոլորակի ժամանակահատվածում ստեղծվեց ինստիտուցիոնալ դատարկություն: Առևտրային կազմակերպությունների ներքին և արտաքին ինստիտուցիոնալ միջավայրերի հավասարեցումը հանգեցրեց ֆինանսական երաշխավորված և կայուն հոսքերի դադարեցման, ինչպես նաև ներկազմակերպական տարբեր խնդիրների (աշխատողներ, կառավարիչներ, տնօրինություն) շահերի սահմանազատման: Ի հայտ եկավ այնպիսի մի երևույթ, որը կարող է կոչվել «ֆիզիկական անձանց տնտեսություն»¹:

Ինչպես նկատում է Դ.Հախվերդյանը, այդ փուլում շուկայական տնտեսությանն անցնելու մոտեցումներում առաջնահերթ նշանակություն էին տալիս տնտեսության ազատականացմանը, կայունությանը և մասնավորեցմանը: Այն, որ ինստիտուցիոնալ գործոնները կարևոր ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա, տնտեսագետները վաղուց են գրանցել: Սակայն, հատկապես անցման տնտեսության վրա ունեցած ազդեցությունների առումներով ուսումնասիրությունները սկսվել են 1990-ական թվականների կեսերին: Կատարվում են տնտեսական աճի վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության գնահատումներ այնպիսի փոփոխականների գծով, ինչպիսիք են՝ տնտեսական ազատության միասնական ինդեքս, կոռուպցիայի ինդեքս, ժողովրդավարության զարգացման մակարդակ, իրավական համակարգի արդյունավետության, ներդրումային օրենքների կանխատեսելիության և այլն: Բնականաբար, որքան կայացած են այդ հասկացությունները, այնքան բարձր է ազգային մրցունակությունը: Համաձայն մրցունակության համաշխարհային զեկույցի՝ որակի առումով Հայաստանի ընդհանուր ինստիտուցիոնալ մակարդակում էական փոփոխություններ չեն կատարվել և շարունակում են բնորոշ մնալ.

- հանրային և մասնավոր հաստատությունների գործունեության լուրջ թերացումները,
- մասնավոր հատվածն իր ինստիտուցիոնալ արդյունավետությամբ չի գերազանցում հանրային հատվածին,
- կորպորատիվ կառավարումը, ընկերությունների բարոյական վարքագիծը, փոքրամասնային բաժնետերերի շահերի պաշտպանությունը մտահոգության առարկա են,
- հանցագործությունների և բռնության ցածր մակարդակը:

Դ.Հախվերդյանի եզրահանգումը հետևյալն է. «Եթե մեր կարճաժամկետ քաղաքականությունը սահմանափակված է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ պայմաններով, ապա երկարաժամկետ հեռանկարում մենք կարող ենք դրանք վերածել արտադրության աճն ու սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող գործոնի: Բայց այդպիսի քաղաքականության հաջող անցկացման համար անհրաժեշտ են այլ գիտելիքներ, քան փոխարժեքի և տոկոսադրույքների ուղղումների քաղաքականությունը»²:

¹ Ա.Մարկոսյան, Մ.Մանուկյան, Առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները ՀՀ իրական հատվածում // Եր., 2010, էջ 9:

² «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» // հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 426:

Անտիկ ժամանակներից սկսած՝ փիլիսոփայական միտքը փորձել է որոշակիացնել մարդու հասարակական գոյության կերպը, սոցիումի զարգացման ուղիները: Առաջադրվել են հասարակության վերակառուցման ծրագրեր՝ ուրվագծելով մի ներքին զարգացման առաջընթաց դեպի ավելի բարձր, կատարյալ վիճակ: Վ.Սադովնիչին գտնում է. «Վերջին հաշվով մարդկությունը միայն երկու հնարավորություններ ունի գուշակելու ապագան՝ գիտությունը և կրոնը: Ինչպես նկատել է փայտուն ֆիզիկոս Սթիվեն Հոքինգը, ընդարձակվող տիեզերքի և մեծ պայթյունի ճշմարտության տեսության հավատքը չի հակասում արարչագործ Աստծո նկատմամբ հավատքին, բայց ցույց է տալիս այն ժամանակի սահմանները, որի ընթացքում նա պետք է իրագործեր իր խնդիրը: Գիտությունը, ինչ խոսք, միշտ ժամանակի մեջ է, հետևապես ապագա ունի: Բայց փորձը ցույց է տալիս, որ գիտության զարգացումը կանխատեսելը անշնորհակալ գործ է»¹: Այսինքն՝ մարդկության սոցիալական ու բարոյական կատարելագործման իրական միջոցները բանականությունը տեսնում է գիտության մեջ: Վերջինս էլ պետք է ձևավորի գիտելիքի կամ գիտելիքահենք ապագա հասարակությունը: Մի կողմ թողնելով շարունակական առաջընթացի իրողությունը մարդկային հասարակության անշեղ զարգացման տնտեսագիտական օրենքի գոյության գործողությունն դիտելու վերաբերյալ դիտողությունները՝ Բ.Եդիսգարյանը հասարակության ապագա ցանկալի տարբերակներ ձևավորելիս կարևորում է հետևյալ հարցերին «միանշանակ» պատասխաններ գտնելը.

- «որո՞նք են մարդկության համընդհանուր (գլոբալ) նպատակները,
- ո՞ր գործոններն են հիմնականում պայմանավորում մարդու և մարդկային հասարակության անշեղ զարգացման տնտեսագիտական օրենքի գործողությունն անցյալում, և ինչպիսի՞ն են լինելու դրանք ապագայում,
- որո՞նք են այդ պայմանների արտահայտման հիմնական ձևերը, դրանց պահպանման և զարգացման միջոցառումները,
- որո՞նք են մարդկային հասարակության հետագա փոփոխությունների կանխատեսվող ուղղությունները և չափը, ինչպիսի՞ն է դրանց իրողություն դառնալու հավանականությունը, և ինչպե՞ս կարող են դրանք ազդել մարդկային հասարակության զարգացման վրա, մարդկային գործունեության ո՞ր ուղղությունները, ազդող ո՞ր գործոնները և դրանց կիրառման ինչպիսի՞ միջոցառումներն են առաջնայնություն ունենալու և ռազմավարական են մարդու և, մարդկային հասարակության և հետագա զարգացման համար, որոնց մշակումն ու կիրառությունն այս առումով առավել հրատապ է համարվելու կառավարման համակարգում,
- տարածաշրջանային, ժամանակաշրջանային, սոցիալական և գործառության (ոլորտային) ինչպիսի՞ տարատեսակներ կարող է ունենալ ապագա մարդկային հասարակությունը, և ինչպե՞ս դա կարող է ազդել համընդհանուր (համաշխարհային) հասարակության զարգացման և դրանում առանձին տեսակների տեղի և դերի վրա,
- ինչպիսի՞ն է լինելու ապագա հասարակության ձևավորման, անվտանգ գոյության և արդյունավետ գործունեության կառավարման համակարգը...,
- ինչպիսի՞ն է լինելու ապագա հասարակության... անվանումը»²:

¹ Տե՛ս «В мире науки», 2006, N1, с.71.

² «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» / գիտական հոդվածների ժողովածու 2 / Եր., «Անանիա Շիրակացի համալսարանի» հրատ., 2009, էջ 38-39:

Մարդկության զարգացման ապագա հիմնական ուղղությունները, հատկապես երկարատև ժամանակի կտրվածքով, հազիվ թե հնարավոր է կանխատեսել, կարող են ի հայտ գալ երևույթներ, որոնց արդյունքում այն կսկսի շարժվել այլ ուղիով: Այս իմաստով նշված հարցերը՝ մշակման դժվարությունների և պատասխանների առումներով, պատկանում են անորոշությունների տիրույթին: Դրանք մի զգալի մասով իրենց մեկնություններն են ստացել Ա.Գյուրջյանի «Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները» աշխատության մեջ, որտեղ հեղինակն իր նպատակադրումը փորձում է իրացնել գրքի հետևյալ գլուխներում՝ «Գիտակցված գործունեությունը մարդու ապրելակերպ և նպատակների իրագործման ուղի», «Մարդկային կապիտալը՝ գիտակցված գործունեության հիմնական մասնակից և միջոց», «Մարդկային գիտելիքահենք գործունեության կառավարման սկզբունքային ապահովման համակարգը. էությունը և կառուցվածքը», «Սկզբունքագիտություն. առանձնացումը որպես գիտության ճյուղ, հետազոտությունների հիմնական ուղղությունները», «Կառավարման ընդհանրական գործառնությունները և իրականացման տեխնոլոգիական ապահովումը», «Համակարգային կառավարում. էությունը և գործոնները», «Նպատակային ծրագրերի իրականացման ընթացիկ պլանավորում և կազմակերպում»: Վերնագրերում կարծես սղագրված է գրքի բովանդակությունը՝ կոչված ուրվագծելու մարդկության գլոբալ նպատակների՝ գոյատևման ու զարգացման հիմնախնդիրները: Իսկ դրան հեղինակը հետամուտ է «ոչ թե մասնակի նպատակների միավորման և փոխհամաձայնեցման (այսինքն՝ նպատակների սինթեզի կամ ներքևից վերև համատեղման) եղանակով, այլ մարդակերպի առանձնահատկություններից մարդկային առավել ընդհանրական նպատակների հնարավոր բազմությունից տրամաբանական ընտրություն կատարելով: Հետևաբար, այս ընտրությունը հիմք կարող է դառնալ պատասխանելու այն հարցին, թե ինչպես ձևավորել մարդկային հասարակություն, այդ թվում նաև ողջ մարդկության համար, նպատակների համակարգը, համակարգել մարդկության և իր հատվածների բազմաթիվ և տարաբնույթ նպատակները՝ ձևավորելով դրանց հիերարխիկ պատկերը՝ որպես համակարգ: Զանի որ հիմքում դրվում են վերին մակարդակում տրամաբանորեն ընտրված ընդհանրական (գլոբալ) նպատակները, ապա համակարգի ձևավորումն ընթանալու է դրանց հիերարխիկ կառուցվածքավորման միջոցով, հաջորդական մակարդակների աստիճանական մանրամասնեցման և կոնկրետացման եղանակով, յուրաքանչյուր մակարդակին հավելելով նաև այդ մակարդակին հատուկ սեփական նպատակները»¹: Ինչպես ակներև է, մարդկության գոյության և զարգացման պրոցեսների ճանաչողությունը ենթարկվում է վերլուծական որոշակի սխեմայի: Ինձ թվում է բերված սխեմայում հարցերի բարդությունները պարզապես կտարրալուծվեն մակարդակների հիերարխիայում: Այսօր հասարակության բնույթի ու օրինաչափությունների վերաբերյալ տեսական ընդհանրացումների ժամանակ ընդունված է խոսել գլոբալ, փոխկախված աշխարհի տեսանկյունից: Ինչ խոսք, փոխվել է աշխարհը, երկրները, ազգերը հայտնվել են նոր կապերի մեջ, որոնք ինքնաբերաբար առաջադրում են «փիլիսոփայական նոր խորհուրդներ որոնելու անհրաժեշտությունը»՝ գլոբալացումն իմաստավորելով որպես «համաշխարհային տնտեսության զարգացման բարձրագույն ստադիա»: Վերանում են երկրների, տնտեսական շրջանների միջև ավանդական արգելքները, տնտեսությունը, գիտությունը, քաղաքականությունը, պաշտպանությունը, մշակույթը, բնակչության միգրացիան կարծես դուրս են եկել գուտ ազգային լուծումների շրջանակներից՝ ցրելով այն մտայնությունը, թե պատմությունը գիտակցորեն կերտում են մարդիկ՝ այն ուղղորդելով այս կամ այն կողմը, իրականում լինելով

¹ Գյուրջյան Ա., Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները, Եր., 2008, էջ 67:

միլիոնավոր մարդկանց տարամետ կամքերը՝ հաճախ չհասկանալով, թե ինչ է կատարվում¹։ Եթե մարդկության ապագայի չափանիշների համար ելակետ ընդունենք այն, որ աշխարհը միասնական է որպես մարդկային մեծ հանրություն, ապա «ավանդական արգելքների» վերացումը կարելի է դիտել զուտ որպես դրական երևույթ։ Այս դիտակետից էլ Ա.Գյուրջյանը վկայակոչում է իտալացի տնտեսագետ Վիլֆրեդո Պարետոյի տեսությունը սոցիալական օպտիմումի վերաբերյալ։ Հայտնի է, որ մինչև Պարետոն հասարակական բարեկեցությունն ըստ էության դիտվում էր որպես անհատական բարեկեցությունների գումար։ Հետևապես, հասարակության անդամների բարեկեցության բարձրացումն առանձին-առանձին ինքնաբերաբար բարձրացում է նաև հասարակական բարեկեցությունը։ Պարետոն ցույց տվեց հասարակական բարեկեցության աճի սահմանը, ըստ որի իր մաքսիմումին հասարակական բարեկեցության հասնելու հատկանիշն այն իրավիճակն է, երբ արդեն ոչ միայն անհատական բարեկեցությունը չի կարող ավելացնել առանց մեկ ուրիշի անհատական բարեկեցության նվազելու։ Այս դրույթը համապատասխանում է նաև ռեսուրսների օպտիմալ բաշխմանը։ Համապատասխանաբար, շարժումը դեպի օպտիմում տեղի է ունենում հասարակության թեկուզ մեկ անդամի բարեկեցության աճի ժամանակ, հասարակության մնացած անդամների բարեկեցությունը պահպանելու պայմանով։ Պարետոն ընդգծում է, որ իրականում կարող են գոյություն ունենալ տնտեսության հավասարակշռության բազում տարբերակներ՝ կախված արտադրական ռեսուրսների նկատմամբ սեփականության բաշխումից։ Հետևապես, հնարավոր է «Պարետոյի օպտիմումի» բազմաթիվ քանակություն։ Այդ դեպքում ինչպե՞ս համադրել այդ տարբեր հավասարակշռությունների տարբերակները։ Համաձայն Պարետոյի՝ երկու համեմատվող տարբերակներից սոցիալապես էֆեկտիվ է այն, որի դեպքում գոնե մեկ սուբյեկտի վիճակն ավելի լավ է, իսկ մնացածներինը համեմայն դեպս վատ չէ²։ Ստացվում է, որ Պարետոյի սոցիալական օպտիմալության պայմանը հարաբերական հասկացություն է, իսկ աշխարհն էլ այսօր միասնական չէ և բաղկացած է ավելի քան 200 անկախ ինքնուրույն պետություններից ու ազգային միավորումներից՝ իրենց խնդիրներով, շահերով ու դժվարություններով։ Եվ արդյոք «միջազգային ամենաբարձր մակարդակի կազմակերպությունների ու մարմինների կողմից՝ գիտական հասարակության և ողջ հանրության ակտիվ մասնակցությամբ» մարդկության գլոբալ նպատակների ձևավորման վերապահումը³ չի հանգեցնի ազգային ու համամարդկային շահերի համահարթեցման։ Միջազգային վալյուտային ֆոնդը, Համաշխարհային բանկը, Համաշխարհային առևտրական կազմակերպությունը գործում են գլոբալացման սկզբունքներով, որոնք կարծես Արևմուտքի բնական տրվածքի իրավունքով իրականացնում են ազգային տնտեսությունների ունիֆիկացիա՝ որոշակի միատեսակ կանոնների շուրջ ապահովելով կապիտալի, ապրանքների և ծառայությունների ազատ շարժ շուկայական օրենքներով։ Ինչպես նկատում է հայտնի սոցիոլոգ Մ.Կաստելսը, վարկերի և ինվեստիցիաների կարիք ունեցող երկրներին պարտադրում են խիստ կառուցվածքային ադապտացիաներ, անկախ յուրաքանչյուրի առանձնահատկություններից⁴։ «Նպատակային արդյունավետ ուղղվածությունը՝ մարդու գիտակցված գործելու կանխադրույթը» ոչինչ այնքան չի շահարկում, որքան տնտեսական գործոնը ու մի կողմ թողնելով հոգևոր այլ ազդակների դերը՝ նեղացնում է կատարվող գործառույթների վերլուծական տեսադաշտը։ Չինգիզ Այթմատովը նկատում է, թե «...դժբախտաբար, հումանիստական արժեքներն ընդհանուր ճգնաժամ

¹ “Наука и техника”, 2008, N3, с.6.

² Левитина Р. Л. “История экономических учений”, М., 2001, с.55.

³ Ա.Գյուրջյան, Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները, Եր., 2008, էջ 64:

⁴ Бредво Т.В., Волков Г.Ю., Миронов Л.А. “Глобализация мировой экономики”, М., 2008, с. 13.

ենն ապրում: Ժամանակակից կրոններն էլ այժմ չափից ավելի հպարտ են իրենց պահում: Կրոնական գիտակցության ճգնաժամը, – ես չեմ առանձնացնում այս կամ այն առանձին կրոնը, – արդեն սկսվել է: Ես դա հասկացել եմ վերջերս: Կիրգիզիայի գյուղերից մեկում մարդ էր մահացել, որն իսլամից անցել էր այլ հավատքի: Գերեզման տանող նրա հարազատների ճանապարհը փակում է տեղական մուսուլմանների կատաղի ամբոխը, և ստիպված էին հանգուցյալին տեղափոխել հողին հանձնելու հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա: Եթե գերեզմանի առաջ մենք չենք կարողանում մեկս մյուսին զիջել ճանապարհը, էլ ինչ խոսել կյանքի մասին»¹:

Ըստ էության բացակայում են մարդկությունը կառավարող գաղափարները, իսկ միջազգային կազմակերպությունների ու մարմինների կողմից գլոբալացման արագացման ջանքերը հաճախ հանգեցնում են դիմադրության՝ պատճառ դառնալով տնտեսական ու քաղաքական ցնցումների: Մինչդեռ «պատմությունը չի սիրում, երբ նրան հրում են մեջքից, պատմությունն ինքն է նշանակում ժամկետը»:

– 7 –

Ջոն Մեյնարդ Բեյնսը մի առիթով կենաց է ասել տնտեսագետների մասին, թե նրանք այն մարդիկ են, ովքեր «հնարավոր են դարձնում քաղաքակրթությունը»: Նրանց մասին է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հրապարակած Ռ.Ն.Սարինյանի և Մ.Կ.Աղայանի «Նշանավոր տնտեսագետների տողանը. գիտակենսագրական ուրվագծեր» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, 479 էջ) աշխատությունը (գիտական խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան): Ժամանակակից տնտեսագիտությունը ձևավորվել է տնտեսագետների բազմաթիվ սերունդների, դպրոցների, ուսմունքների հասարակական գաղափարների հաջորդափոխության արդյունքում: Նշված աշխատությունն ընդգրկում է հետքեյնսյան շրջանը: Եվ ոչ պատահականորեն 1936-ին լույս է տեսնում անգլիացի տնտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսի «Ջբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» հետազոտությունը, որին վիճակված էր սահմանազատել տնտեսագիտական միտքը: Հաջորդ տասնամյակներն անցել են այդ աշխատության ազդեցության ներքո: Տնտեսագիտական միտքը մի դեպքում համաձայնվում էր նրա հետ, մի այլ դեպքում կատարում ճշգրտումներ ու լրացումներ, մի երրորդ դեպքում մերժում նրա առաջադրած դրույթները: Տնտեսագետներից գրեթե ոչ ոք նրան չի շրջանցել՝ հայացքների այդ ընդհանուր տարակարծությունների մեջ նշանավորելով այն ժամանակաշրջանի տնտեսագիտության տարեգրությունը, որն ընդունված է անվանել «հետքեյնսյան շրջան»: Անցած տասնամյակների ընթացքում տնտեսագիտական միտքը գրանցել է երևույթների վերլուծության նոր մոտեցումներ, ի հայտ են եկել նոր ուղղություններ: Աշխատության գիտակենսագրական ուրվագծերն, ըստ էության, էքսկուրս են նշված շրջանի տնտեսագիտական մտքի ուղեգծերով: Նրանում ընդգրկված տնտեսագետներից յուրաքանչյուրի վերաբերյալ ուրվագծերի ձևով ներկայացնում են կյանքի և գործունեության փուլերը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով գիտական գործունեության ու առաջադրված դրույթների՝ տնտեսագիտության համար ունեցած նշանակության վրա: Ինչ խոսք, հիշատակության արժանի բոլոր տնտեսագետները չէ, որ ընդգրկվել են աշխատության մեջ, սակայն նրանում ընտրված անունները (թվով 104) իրենց հավաքականության մեջ հեղինակների կարծիքով բովանդակում են արդի տնտեսագիտական մտածողությունը: Նյութի ընձեռած հնարավորություններից ելնելով՝ շարադրանքը կառուցվել է թարգմանությունների, ազատ մեկնաբանությունների և սեփական վերլուծությունների սկզբունքներով:

¹ “Аргументы и факты”, 2008, N25.

Ուրվագծերի համար հեղինակներն ընտրել են համառոտ հանրագիտարանական բառարանի սկզբունքը, որտեղ կարելի է գտնել և՛ կենսագրական, և՛ տեսության, և՛ տնտեսական կյանքի վերաբերյալ գործնական լուծումների, և՛ աղբյուրագիտական նշանակության առումներով տեղեկատվություն, որը, լինելով հայոց լեզվով առաջին փորձը, օգտակար կարող է լինել և՛ մասնագետների, և՛ հայ ընթերցող հասարակության համար:

*

* *

«Նշանավոր տնտեսագետների տողանը» աշխատությանը զուգահեռ, հրատարակության էր պատրաստվում նաև «Հայ տնտեսագետներ» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2010, 336 էջ) աշխատությունը (հեղինակներ՝ Ռոբերտ Սարինյան, Վլադիմիր Հարությունյան, Մարինե Աղայան): Այն, ըստ էության, հայ տնտեսագիտական մտքի պատմության ուղեցույց է՝ անձնականացված շուրջ 144 անունների գիտակենսագրական ուրվագծերի ձևով՝ սկսած XIX դարի կեսերից մինչև այժմ:

Հարկ եմ համարում աշխատության վերաբերյալ կատարել որոշ մեկնաբանություններ: Նախ, ընտրված ժամանակահատվածի առումով: Ինչ խոսք, հայ տնտեսագիտական մտքի ակունքները սկիզբ են առնում հնագույն ժամանակներից, հայ պատմիչների աշխատություններում և այլ աղբյուրներում կարելի է հանդիպել դիտողությունների բնախրային տնտեսության, կենցաղի, տնտեսության կարգավորման տարբեր հարցերի շուրջ, սակայն դրանցում ուրվագծվում է հայ տնտեսագիտության նախապատմությունը: Եվ միայն XIX դարի կեսերին է, որ հայ տնտեսագետները ներտնտեսական հարցերի քննությունը սկսում են կատարել արևմտյան տնտեսագիտական դպրոցներին բնորոշ հասկացություններով ու կատեգորիաներով: Իսկ արդեն 70-ական թվականներին սկիզբ է առնում հայ հասարակական զարգացման կապիտալիստական շրջափուլը: Տնտեսական կյանքի փոխակերպությունն օբյեկտիվորեն պայմանավորվում է երևույթների տնտեսական կետից վերլուծության, հետևապես նաև տնտեսական գիտության հասարակական անհրաժեշտությամբ: Հասարակական մտքի առաջ ծառանում է սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների հարցը, տնտեսագիտական միտքը ստորաբաժանելով տարբեր հոսանքների, որոնք մի ուրույն համապատասխանություն ունեն հասարակական հոսանքների սոցիալական բովանդակության հետ: Իսկ այն տարընթաց էր հասարակական մտայնության համար: Այս իմաստով որոշակի են տարբերվում տնտեսական զարգացման այն ուղեգծումները, որ առաջադրում էին նշված ժամանակաշրջանի հայ տնտեսագիտական մտքի ազատամտական, ազգային-պահպանողական և նարոդնիկական հոսանքները: Փորձ է արվել այդ հոսանքների նշանոդները ներկայացնել Գ.Արծրունու, Ս.Եղիազարյանի, Ա.Երիցյանի, Ս.Զավարյանի, Ա.Արասխանյանի և այլ տնտեսագետների գիտակենսագրական ուրվագծերում:

XX դարի սկիզբը հասարակության տնտեսական ու սոցիալական նոր որոնումների ժամանակաշրջան էր: Հասարակական հայեցողության առաջ ծառանում են բազմաթիվ նոր անհայտներ, նոր պատրանքներ, ակնկալվում նոր սպասումներ հասարակության կնճռոտ հարցերի լուծման ասպարեզում: Նոր կացության պայմաններում «...ազգային մտայնության շերտերում ի հայտ եկան սոցիալական նորահայտ շարժումներ դավանող հոսանքներ և տեսություններ»:

Հայ տնտեսագիտական միտքը նշանավորվում է նոր շահեկան ուսումնասիրություններով (Մ.Բունիաթյան, Վ.Տոտոմյանց, Ս.Գուլիշամբարով, Բ.Իշխանյան, Դ.Անանուն և ուրիշներ), որոնց մի նշանակալից մասը հրատարակվել են եվրոպական տարբեր լեզուներով:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սկսվում է մի ամբողջ պատմաշրջանի՝ խորհրդային տնտեսագիտական մտքի շրջափուլը: Տնտեսագիտությունն ավելի, քան հասարակական մտքի մի այլ բնագավառ, պահպանողական էր իր պահվածքով, ենթակա վերջավորված մտայնություն թվացող Աստվածաշնչի տիրույթին և անհաղորդ համաշխարհային տնտեսագիտական մտքին ու, հատկապես, տեսության մեջ՝ ենթակա «միագիծ ու միակողմանի աշխարհընկալման» տիրույթին: Այդպիսին էր ժամանակը բազմաթիվ սերունդների համար: Ինչպես նկատում է Ս.Սարինյանը. «Հասարակագիտական ու պատմափիլիսոփայական կատեգորիաները թվաբանական ճշտությամբ գործում են ամենուրեք՝ արտադրական հարաբերություններ, դասակարգային պայքար, պրոլետարիատի դիկտատուրա, կոմունիստական իդեալ, որոնց տեսական բանաձևերը նույնիսկ ենթակա չեն կոմենտարիաների կամ տարբերակված մեկնության: Իր միակ ուժը քննադատությունն է՝ քննադատություն բոլոր տեսությունների ու ուսմունքների, բացասումն այն ամենի, ինչ հակասում է մարքսիզմ-լենինիզմի այբուբենին»¹:

«Հայ տնտեսագետներ» աշխատության հեղինակները չեն առաջնորդվել անտեսելու կատարվածը՝ որպես որոշակի ուղղությամբ իրականացված հետազոտական փորձի: Հայ տնտեսագետներն առաջադրում էին կոնկրետ լուծումներ ճյուղային ու ժողովրդատնտեսական կտրվածքներով, ձևավորում ու հիմնավորում հանրապետության զարգացման պլանները, հանդես գալիս տնտեսական բազմաթիվ խնդիրների վերաբերյալ հետազոտություններով: Ինչպես նշվում է աշխատության ներածականում, «այն իր նպատակի մեջ հեռու է ճշտի ու սխալի սահմաններ որոշելու հավանականությունից»: Այն պատմություն է, իսկ ինչպես ասում է Ժորժի Ամադուն. «Պատմությունը պատմում են և ոչ թե բացատրում»:

XX դարի 90-ական թվականները շրջադարձային էին հանրապետության համար: Հայաստանը դիմորոշվեց դեպի շուկայական տնտեսաձև՝ սկզբնավորելով հայ տնտեսագիտական մտքի համար որոնումների և լուծումների նորագույն շրջանը:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի ռուս տնտեսագիտական մտքի համար նշվում է մի առանձնահատկություն, որ այն չէր բնորոշվում հստակ ուրվագծված դպրոցների առկայությամբ, բայց այդ «ունիվերսալ» մտածողության մեջ առկա էին տարբեր ուղղությունների նստվածքները²: Դա բնորոշ էր նաև հայ տնտեսագիտական մտքի համար ինչպես նշված, այնպես էլ արդի ժամանակաշրջանի համար: Պլյուրալիստական հայացքը դարձել է գլոբալացվող տնտեսական կյանքի բնորոշ գիծը, երկրների տնտեսական մոդելները կառուցելով արդեն գոյություն ունեցող մոդելների առանձին տարրերի սինթեզման վրա, իսկ հաճախ էլ փորձել այլ երկրներում արդյունավետ գործող տնտեսական հաստատություններն ուղղակիորեն ներդնել այլ ազգային պետական միջավայրում: Յու.Օսլևիչն առաջադրում է տնտեսագիտական մտքի ազգային դպրոցը բնութագրող չափանիշների որոշակի համակարգ.

- ի տարբերություն որոշակի շերտերի յուրահատուկ շահերն արտահայտող «ուղղությունական» դպրոցների՝ այն ներկայացնում է համազգային շահերը,
- ի տարբերություն այլ ազգային դպրոցների՝ նրան բնորոշ է տնտեսագիտության տեսության առարկայի ու մեթոդի սեփական հասկացությունը,
- այս դիրքերից ազգային դպրոցն իր յուրատեսակ բաժինն է մտցնում համաշխարհային տնտեսական գիտության մեջ,

¹ Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն. պատմաքննական տեսություն, Եր., 1998, էջ 159:

² «История экономических учений (под редакцией В.Автоматова), М., 2003, с.385-386.

- դպրոցը պահպանում է իր հիմնական մոտեցումների հաջորդականությունը (փոխանցելիությունը) գիտնականների մի քանի սերունդների ընթացքում¹:

Նշված մակարդակում է տեսանելի այս կամ այն դպրոցի առկայությունը, ինչը հիմք չի տալիս խոսելու տնտեսագիտության հայկական դպրոցների մասին: Այս նկատառումներից ելնելով՝ «Հայ տնտեսագետներ» աշխատության շարադրանքը կառուցվել է ոչ թե ժամանակագրական պարզ հաջորդականության մեջ, այլ տրվել են տնտեսագետների դիմանկարներն այբբենական կարգով: Իբրև առաջին փորձ՝ այն չի հավակնում անթերի լինելու: Նրա նպատակն է տնտեսագետների կենսագրական, գիտական ու աշխատանքային գործունեության վերաբերյալ ուրվագծերի ամբողջության մեջ արտահայտել հայ տնտեսագիտական մտքի շարժման պատմությունը:

*
* *

Վերջին երկու տասնամյակների ընթացքում փոխվել է տնտեսական գիտության կարգավիճակը, մեծացել է հասարակության հետաքրքրությունը նրա նկատմամբ: Փոխվել է տնտեսական միջավայրը, մարդը հայտնվել է նոր չափումների մեջ, այն կարգավորող նոր օրենքներով ու հասկացություններով: Տնտեսագիտական գրականության շուկան հարստացել է նոր դասագրքերով ու աշխատություններով: Ի հայտ են եկել ինչպես ընդհանուր տնտեսագիտական, այնպես էլ նրա առանձին հատվածներն արտացոլող հանրագիտարանական, բացատրական բառարաններ, տեղեկատուներ: Այդ կարգի աշխատություններից է Ա.Հ.Բայադյանի «Ֆինանսավիճակագրական բացատրական բառարան» (Եր., «Լիմուշ» հրատարակչություն, 2008, 514 էջ) աշխատությունը: Անվանումն արդեն իսկ վկայում է, որ այն որոշակի ուղղվածություն ունի և հետամտում է տնտեսագիտության որոշակի ոլորտներին առնչվող ու հաճախակի օգտագործվող հասկացությունների բացատրությունը: Ավելի կոնկրետ, այն ներառում է ֆինանսների ընդհանուր տեսության, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների ու վարկավորման գործընթացների, դրամաշրջանառության, բանկային ու հարկային համակարգերի, ապահովագրական գործի, հաշվապահական հաշվառման ու արժեթղթերի շուկային բնորոշ կատեգորիաների ու հասկացությունների իմացությունը: Բառարանը գրված է համապատասխան միջազգային փորձի հաշվառման դիտակետից: Եվ, որ շատ կարևոր է, դա կատարված է գործող նորմատիվային-իրավական ակտերին համապատասխան: Այն զուտ բացատրական լինելուց բացի, ենթադրում է նաև մեթոդական ցուցումներ, որոնք կարող են հնարավորություն տալ գնահատելու տնտեսական սուբյեկտների ֆինանսատնտեսական դրությունը:

Հայտնի է, որ ինչպես բոլոր գիտությունները, այնպես էլ տնտեսագիտությունն ունի իրեն բնորոշ մասնագիտական բառապաշարը, որը ձևավորվել է երկարատև որոնումների արդյունքում: Հարկ է ընդունել, որ առանձին հասկացություններ ու կատեգորիաներ կարող են չունենալ նաև դրանց հայկական համարժեքները: Ժամանակը հաճախ որոշակի իմաստ է դնում այս կամ այն հասկացության մեջ, քան նրա զուտ բառակապակցային արտահայտությունն է: Իսկ երբ անտեսվում է այս հանգամանքը՝ փորձելով առանց վերապահությունների համընդհանուր ճանաչում գտած հասկացությունները հայկականացման փաստարկով փոխարինել նորերով, ապա հաճախ աղճատվում են տնտեսական երևույթները՝ այդպես էլ շրջանառության չարժանանալով հասարակության կողմից (անցած երկու տասնամյակները զերծ չէին նման փորձերից): Այս իմաստով Ա.Բայադյանի բառարանը կազմված է աննախապաշար ազատու-

¹ “Вопросы экономики”, 2001, N2, с. 29-30.

քյամբ, սակայն առանց ծայրահեղությունների՝ ուղեցույց ունենալով հայ տնտեսագիտության բառապաշարը հարստացնելու արդի հասկացությունները: Այն իրավամբ անհրաժեշտ են դիտում տնտեսական սուբյեկտներին, ֆինանսական համակարգի տարբեր ոլորտների աշխատողներին օգտակար լինելու իր նպատակադրման մեջ: Ա.Բայադյանի ֆինանսավիճակագրական բացատրական բառարանը հավակնում է բառարան-ձեռնարկի:

БЕЛЛА ГАБРИЕЛЯН

Старший научный сотрудник ИЭ НАН РА, к.э.н.

МОДЕЛЬ ,МОТИВАЦИЯ - СТИМУЛЬ И ТИПЫ МОТИВАЦИЙ

Управление персоналом включает многие составляющие. Среди них: кадровая политика, взаимоотношения в коллективе, социально-психологические аспекты управления. Ключевое же место занимает определение способов повышения производительности, путей роста творческой инициативы, а также стимулирование и мотивация работников.

Проблемы грамотного стимулирования и эффективной мотивации персонала всегда были и остаются наиболее актуальными для менеджмента организаций. Важность и актуальность данных проблем не оспаривается ни наукой, ни практикой менеджмента, поскольку от четкой системы мотивации и стимулирования зависят конечные результаты деятельности предприятия и организационная активность персонала.

Эффективность той или иной системы мотивации и стимулирования в практическом плане во многом зависит от руководства предприятия, где грамотная система мотивации позволяет претворять в жизнь стоящие перед организацией цели. При этом важно разработать ту систему мотивации, которая идентична данному предприятию, и подобрать соответствующие способы стимулирования отдельно для каждого работника. По сути, менеджер организации должен стараться сам выбирать, каким образом стимулировать каждого работника для выполнения основной задачи. Главное, здесь осуществить правильный выбор, в управленческом плане - ,угадать способ ориентирования сотрудников, направив их на достижение целей организации.

Для этого необходимо проанализировать структуру интересов и особенности характера членов трудового коллектива и на основании этого построить такую систему стимулирования, которая вызывала бы предельно конструктивное организационное поведение и обеспечивала достижение организационного результата. Наиболее удачной моделью построения системы стимулирования, которую может использовать менеджмент организаций, по нашему мнению, является модель ,Мотивация - стимул, предложенная В.И. Герчиковым¹.

Ни одна система управления не станет эффективно функционировать, если не будет разработана эффективная модель мотивации, так как мотивация побуждает конкретного индивида и коллектив в целом к достижению личных и коллективных целей.

¹ Герчиков В.И. Мотивация, стимулирование и оплата труда персонала: Учеб. пособие – М.: ГУ ВШЭ, 2003.- 280 с.